ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

21.08.2025թ.

ՀՀ ԿԳՄՍ <<Գավառի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողի հետևյալ թափուր տեղերի համար՝

<<Անվտանգություն և առաջին բուժօգնություն>> մոդուլ /36 ժամ/:

Վերոնշյալ թափուր տեղերի Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝
1)Հանրակրթական առարկաների դեպքում՝ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենիք 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
2)մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը պետք է ներկայացնի ներքոհիշյալ փաստաթղթերը՝
1)դիմում ձև/լրացվում է տեղում/,
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճեն),
3)անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճեն),
4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5)ինքնակենսագրություն,
6)մեկ լուսանկար 3x4 չափի,
7)այլ պետության քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստելու փաստաթուղթ, բացառության՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8)արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն),
9)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին: Մասնակիցը Հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային(մոդուլին) և մանկավարժական գործունեությանը, վիճակահանությամբ ընտրում է հարցատոմսը, որը բաղկացած է հինգ հարցից, որում կարող են ներառվել նաև 1-3 գործնական հարցեր և կարող է անձին տրվել մինչև հինգ հարակից հարց, որը նույնպես առնչվում է առաջադրանքին:

Փաստաթղթերը ընդունվում են ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25 հասցեում, 2025 թվականի օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 03 -ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-բացի շաբաթ, կիրակի օրերից :
Մրցույթը տեղի կունենա
2025թ. սեպտեմբերի 08 -ին ժամը 14:00-ին
ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Գավառ, Բունիաթյան 25
Տեղեկության համար զանգահարել /0264/ 2-66-66 հեռախոսահամարով
Էլ. հասցե՝ erajshtakancollege@mail.ru